


ՀԱՆԳԻՍ

S. ՏՐԴԱՏ ՎՐԴ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ



REX

Յանուն Ա. Աթոռոյս Ամենապատիւ Տեղապահ Արքազան Հօր, և Ա. Յակոբեանց Միարանութեան, ցաւով կը տեղեկացնենք մահը Հոդ. Տ. Տրդատ Վրդ. Պէրպէրեանի, որ յիտ կարծատեւ հիւանդութեան մը կնքեց իր մահկանացուն Շաբաթ, 31 Յուլիս 1954ին, Հայֆայի կաթավարական հիւանդանոցին մէջ:

Հանգուցեալը ծնած է 1892ին Կեսարիա: Իր նախնական կրթութիւնը ստացած է Կեսարիոյ Ա. Սստուծամայր Եկեղեցւոյ Հայկեան վարժարանին մէջ:

1910 - 1912 կը դրկուի Երուսաղէմ, իրրիւ ուսանող Ժառանգաւորաց վարժանի: 1913ին կը ստանայ ուրարակրութեան աստիճան, իսկ 1918ին կը ծեռնադրուի Սարկաւագ, Տ. Մկրտիչ Եպս. Աղաւնունիի ծեռամբ:

1922ին կը ծեռնադրուի Արենայ: Այսուհետեւ ծեռնասօրէն զանազան պաշտօններ կը վարէ, ըլլալով մատակարար, աւագ թարգման և հանգերծապես Ա. Աթոռոյ:

1932ին մինչեւ 1934 կը վարէ Բեթղեհէմի վանքի տեսչութիւնը, իսկ 1939ին կը կարգուի տեսուչ Ա. Յարութեան Տաճարին, ուր կը մնայ աւելի քան 10 տարիներ, 1950ին կը դրկուի Հայփա, իրրիւ հոգեւոր հովիւ ուր կը մնար ցարդ:

Օձման և թաղման արարողութիւնը կատարուեցաւ Յոպազէի մեր Ա. Նիկողայոս վանքին մէջ: Յուղարկաւորութեան համար Երուսաղէմէն յատկապէս Յոպազէ մնկնած էին Գեր. Տ. Ռուբէն Արքեպս., Հոդ. Տ. Հայկազուն, Տ. Պարգեւ, Տ. Յակոբ և Տ. Կիրեղ վարդապետները:

Հանգուցեալ Հայրսուրբը, բարեհամրոյր և նեզ բնաւորութեամբը Ա. Աթոռոյ մէջ իր բազմամեայ գործունէութեանը ընթացքին սիրուած էր ամենքէն:

Հանգուցեալը իր ետեւ կը ծգէ անշահախնդիր և ծառայատէր Միարանի մը մատակը:

Տէրը թող լուսաւորէ իր հոգին և յաւիտենական հանգիստ պարզեւէ իր պաշտօնէին:

